Սամվել Բալասանյան
քաղաքապետ
ք. Գյումրի

Վարոս Սարոյան
տնակ 231/216
ք. Գյումրի
հեռ. 094-234-265

*«Անորոշ մեղքի ինչ-որ զգացողություն ես ունեմ այս ամենի ու պայծառ աչքերին նայելիս,այն գիտակցությունը, որ այլևս երբեք չես կարող օգնել կյանքի կոչելու նրանցում անթեղված երազանքները, քևաքափ է անում քեզ, համակում խոր վշտով: Մեր միակ մխիթարությունը երևի նրա բանաստեղծությունների ընթերցելն է մնում» ...*

(Թ. Տոնոյան)

21.11.2018 թ.
15233

Դիմում – նամակ

*Մեծարգո Սամվել Բալասանյան.*

1988թ. աշխարհացունց երկրաշարժը մեզանից խլեց նաև 9-ամյա իմ դստեր՝ Լիլիթ Սարոյանի կյանքը: Կարծես ի հակակշիռ ահռելի այդ ցավի Լիլիթս գրել ու մեզ է ավանդել 22 անմահ, մասնագետների հավաստմամբ հասուն բանաստեղծություններ, որոնք մեկտեղվեցին և 1992 թվականին դարձան գիրք՝ «Փշրված անուրջ» վերնագրով: Գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ 1992թ. հունիսի 18-ին՝ Շուշիի ազատագրման 40-րդ օրը, Լենինականի Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի շենքում (տեսանյութը պահպանվում է): Գրքի վաճառքի ամբողջ հասույթը նվիրաբերվել է ազատագրված Արցախ աշխարհի մայր Շուշիի առաջին դպրոցի կառուցմանը:

2008 թվական. ահավոր երկրաշարժի 20-րդ տարելիցի կապակցությամբ վերահրատարակվեց Լիլիթիս գիրքը մեծ տպաքանակով և հրաշալի մատենագրությամբ: Գիրքը հովանավորեց բարեգութ, մի անձնավորություն՝ Ռալֆ Յիրիկյան, Viva-Cell MTS ընկերության գլխավոր տնօրեն:

Գթասրտությունը պարզև չի փնտրում: Գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ 2009թ. Երևանի Խնկո-Ապոր անվան մանկական գրադարանում (տեխ

Գիրքը նվիրաբերվել է հանրապետության համարյա բոլոր շրջանների դպրոցների, մանկապարտեզների, մանկատների, կազմակերպությունների, անհատ մարդկանց: Գիրքը պատկառանք է, իսկ նվիրումը անգնահատելի արժեք: Գրքի վերահրատարակումից հետո Հայաստանի գրողների միությունը ստեղծեց «Զնծաղիկ» նոր մրցանակ և առաջինը հանձնեց «Փշրված անուրջ»-ին: Գիրքը դարձավ քառակի մրցանակակիր:

Այս ժողովածուն այն հուզական խորհուրդն է, որ Լիլիթը չտեսավ իր բանաստեղծությունները տպագրված: Նա իր ապրած այս փոքրիկ կյանքով՝ ընդամենը 9 տարեկան հասցրեց անել այսքանը.

Նոր որակ, նոր բովանդակություն, նոր մոտեցում, ամեն ինչ կատարյալ, իսկ մուտքը՝ հրաշալի…

Ոչ թե անհավատալի, այլ՝ աներևակայելի իրողություն:

… Հրեշտակ, հրաշամանուկ, մանուկ բանաստեղծ, պատանի տաղանդ… այսպես բնութագրվեց Լիլիթը գրական շրջանակներում:

2010թ. Հայաստանի Գրողների միությունը «Զնծաղիկ» մրցանակը անվանեց Լիլիթ Սաքոյանի անվամբ: Այն այժմ կոչվում է Լիլիթ Սաքոյանի անվան «Զնծաղիկ» մրցանակ:

«Փշրված անուրջ»՝ սա արդեն աշխարհայացք է, աշխարհայացք, որ կենդանի հոգևոր պանթեոն է, ամբողջ մեր հայ ժամանակակից պոեզիայի հանրագումարում:

(Գարուշ Հարյանց, բանաստեղծ, նկարիչ-բեմադրիչ ԱՄՆ)

2018թ. Սեավոր երկրաշարժի 30-րդ տարելիցի կապակցությամբ «Փշրված անուրջ»-ը հրատարակվում է արդեն հայերեն-ռուսերեն լեզվով պատրաստ կլինի դեկտեմբերի կեսերին: Այն հովանավորել է «Իմ քայլը» հիմնադրամը, անձամբ Աննա Հակոբյանի հովանավորմամբ:

Ռուս ազգը նույնպես կծանոթանա այս հրաշամանուկի բանաստեղծություններին:

Ճիշտ է մենք ոչ շատ մեծ ազգ, բայց մեր հրաշալի մեծերի կողքին ունենք նաև հրաշամանուկ-բանաստեղծ, որը իր բանաստեղծական ընկալումով հիրավի անսովոր երևույթ է գրական աշխարհում (Սամվել Սաֆարյան, բանստեղծ, հանրապետական գրական հիմնադրամի նախագահ):

… Մեծերը գրում են գրքեր մանուկների համար, իսկ եղել է երբևիցե այսպիսին՝ մանուկ բանաստեղծի գիրք, չգիտեմ:

(Սիրանուշ Բուլաթյան-լրագրող):

...Հրաշամանուկ ... երևի քիչ է, ասենք... նա պատանի տաղանդ է... Ինքնատիպ ձայն, որը իրենն էր և ոչ մեկինը... դա ինքն է, Լիլիթը...

(Ռոմանոս Սահակյան պրոֆեսոր-մշակութաբան)

... Հայ ժողովրդի հզոր միտքը ստեղծել է հանճարեղ և մեծատաղանդ բանաստեղծների փայլուն համաստեղություն: Տարակույս չունեմ, որ Լիլիթը տարիներ հետո կմիանար այդ համաստեղությանը, եթե տեղի չունենար ահավոր երկրաշարժը:

(Ռազմիկ Մարկոսյան պրոֆեսոր-ակադեմիկոս):

*Մեծարգո պարոն Բալասանյան*

«Փշրված անուրջ» -ի հայերեն-ռուսերեն գիրքը պատրաստ լինելուց հետո, 2019 թվականի հունվարի 22-ին որոշվել է կազմակերպել գրքի շնորհանդեսը, որը տեղի կունենա Գյումրիի թիվ 10 դպրոցում, որտեղ սովորել է Լիլիթը, և որ նա կլիներ 40 տարեկան: Որոշվել է դպրոցի 3-րդ դասարանը կոչել Լիլիթի անունով:

Իմ խոսքը հիմա ուզում եմ ուղղել Ձեզ՝ որպես քաղաքապետի ու նվիրյալ մարդու, որպես հոր և պապիկի՝ <u>դպրոցի պատին փակցնել հուշատախտակ հրաշամանուկի դիմաքանդակով: Այն արդեն կլինի այս բոլոր հրաշք կատարվածների նվիրյալ շարունակությունը, որը մի նոր լույսի հզոր արձակում կլինի: Ինչու չէ, որ այս դպրոցում է սովորել հրաշամանուկ- բանաստեղծ Լիլիթ Սարոյանը, որը նաև մի քարմ ծաղիկ կլինի մեր քաղաքի կողմից՝ Ձեր անմիջական ղեկավարությամբ, հրաշամանուկ-բանաստեղծի շիրմաքարին: Ակնկալում եմ քաղաքապետարանի թույլտվությունը:</u>

Կանխավ իմ մեծ շնորհակալությունը

Առողջություն Ձեզ ու ընտանիքին Ձեր:

Հնարավորություն ու ժամանակ Ձեզ:

Խաղաղություն ու սեր ընտանիքին Ձեր:

Հարգանքներով՝ Վարոս Սարոյան

21.11.2018թ.

1 Ձեռնարկ.